

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

· 1964 թվականի ապրիլի 30-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Սաութ Միլուոկիի հայոց Ս. Հարութիւն եկեղեցում, բացվում է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց թեմի հոգևորականության տարեկան համագումարը։

Համագումարը բացվում է առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի աղոթքով։

Համագումարի առաջին նիստում կատարվում է դիվանի ընտրություն և կազմվում ժողովի օրակարգը։

Հատենի ժողովս, հոտնկայս, ընթերցվում է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ապրիլ 8 թվակիր ողջույնի և օրհնության հետևյալ գիրը.

«Հայրական սիրով կողջունենք ձեր տարեկան համագումարը։ Մեծ գոհունակությամբ և գնահատանքով ծանոթացանք ձեր ծրագրին և օրակարգին։ Ի սրտե կմաղթենք, որ բոլորդ սուրբ հավատքով առավել լուսավորված և առավել գոտեպնդված, ի գործ դնեք ձեր առաջադրանքները ի խնդիր Ամերիկայի հայ հավատացյալ ժողովուրդի հոգևոր կյանքի շինության և ի խնդիր աստվածահաճո հաջողությունների՝ Հայ եկեղեցիին ու ազգին ծառայելու ձեր նվիրական աշխատանքին մեջ։

Աղոթող ենք նաև, որ ձեր թեմական առաջնորդի կողքին բոլորդ մեկ սիրտ մեկ հոգի, եղբայրական սիրով, իրարու աջակից ու լծակից, առավել շենցնեք հայոց Ս. եկեղեցին և անոր նվիրական հովանիին ներքև, ամբողջ ու անխոով պահպանեք Մեր հավատացյալ զավակները, հատկապես նոր հասակ առնող հայ երիտասարդությունը, բոլորի մտքին ու սրտին մեջ վառ ու պայծառ պահելով մեր նախնյաց հավատքին լույսը, մեր մայրենի լեզուն և մեր ազգային հոգևոր մշակույթի մեծ ժառանգությունը։

Ս. էջմիածնեն ձեզի բոլորիդ ողջո՜ւյն և օրհնությո՜ւն։

Սիրելինե՛ր և հարազատնե՛ր Մեր, «Հսկեցէ՛ք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք։ Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14)»։

Համագումարի երկրորդ նիստում կարդացվում են զեկուցագրեր և դասախոսություններ։

Հոգեշնորհ Տ. Զավեն վարդապետ Արզումանյանը դասախոսում է «Հայոց Եկեղեցվո միասնականությունը» թեմայի շուրջ, իսկ արժանապատիվ Տ. Արտեն քահանա Աշճյանը՝ «Մխական կազմակերպություններ» նյութի շուրջ։

Համագումարը ուրբաթ օր, մայիսի 1-ին, իր երրորդ նիստում, սպառում է օրակարգի բոլոր հարցերը, քննության առնելով թեմի ծխական, ծիսական և հոգևոր կյանքի շինության վերաբերյալ խնդիրները։

Հոգևորականության համագումարի ժամանակ, առավոտյան և երեկոյան ժամերին, տեղի են ունենում եկեղեցական պաշտամունք և արարողություններ։